ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի՛ ներկայացուցիչներ, Փամբակ համայնքի ավագանու հարգելի՛ անդամներ, գործընկերնե՛ր, շնորհավորում եմ բոլորիդ՝ տեղական ինքնակառավարման մարմինների օրվա առթիվ:

Շուրջ 28 տարի տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իր ուսերին է առել տեղական մակարդակում համայնքների զարգացման կարևորագույն գործը:

ՏԻՄ ոլորտի հարգելի՛ գործընկերներ, ամենաառաջնային օղակում գտնվելով, հենց դուք եք, որ կրում եք համայնքի կառավարման ամբողջ պատասխանատվությունը:

Փամբակ համայնքում օրեցօր մենք արձանագրում ենք երբեմնի երազած տնտեսական առաջընթացը, ինչը ձեզանից յուրաքանչյուրի աչալուրջ և նվիրված աշխատանքի արդյունքն է:

Շնորհակալ եմ յուրաքանչյուրիդ՝ հանրային շահը ձեր անձնական շահերից վեր դասելու, ձեր ամբողջ գիտելիքը, ուժն ու կարողությունը համայնքի զարգացման գործում ներդնելու համար:

Լիահույս եմ, որ ձեր սրտացավ և հետևողական աշխատանքի շնորհիվ կարողանալու ենք ստեղծել այնպիսի համակարգ, որում ապրող բնակիչը չի մտածում իր հայրենի գյուղը լքելու մասին, այլ կարողանում է իրեն անհրաժեշտ բոլոր ծառայությունները գտնել մեկ տեղում: Այսօր մեզ հաջողվել է ստեղծել յուրաքանչյուր բնակչի համար բարեկեցության բավարար աստիճան, ինչը պարտավորեցնում է առավել շատ և առավել հասցեական աշխատել:

Ոլորտի հարգարժա՛ն ներկայացուցիչներ, սիրելի՛ գործընկերներ, համայնքի զարգացումը շարժուն գործընթաց է, որի շարժիչ ուժը դուք եք:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ, ցանկանում եմ համախմբվածություն՝ մեկ ընդհանուր պետականամետ գաղափարի շուրջ, շրջահայացություն և ողջախոհություն ձեր բոլոր գործերում:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան